ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ

MUNICIPALITY OF TALIN

ՔԱՂԱՔԱՊԵՏ

0501 ք. Թալին, Գայի -1
Հեռ. (0249) 2-25-46, 2-24-19
Ֆաքս (0249) 2-31-38
Էլ. հասցե: taliniqaxaqapetaran@mail.ru

0501 t. Talin
Tel: (0249) 2-25-46, 2-24-19
Fax: (0249) 2-31-38
Email: taliniqaxaqapetaran@mail.ru

№ 056/173

«02» 11 2012 թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքային համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 2-ի <<ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը ,աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 19 որոշումը ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու համար դրա ընդունման անհրաժեշտության հետևյալ հիմնավորումները .

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմում ներքին աուդիտի համակարգի ներդրումն ապահովելու ուղղությամբ կառուցվածքային նոր ստորաբաժանում ստեղծելու համար անհրաժեշտություն է առաջացել վերանայելու աշխատակազմի գործող կառուցվածքը և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը :

Նպատակ ունենալով ,որ կառուցվածքային փոփոխությունների հետևանքով ապահովել ֆինանսական միջոցների խնայողություն ,առաջարկվում է աշխատակազմի ֆինանսական և հարկային գանձումների բաժինը հանել կառուցվածքից և ստեղծել կառուցվածքային նոր ստորաբաժանում ՝ ներքին աուդիտի բաժին / բաժնի պետ / ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ստեղծել նոր պաշտոններ :

Ելք
<< Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
«05» 11 2012թ.
Մուտք № 9/5206-12

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ

<<_02_>> նոյեմբերի 2012 թվականի N_19

<< Արագածոտն մարզի Թալինի քաղաքապետարանի Աշխատակազմի Կառուցվածքը, Աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 4-րդ կետով և ի կատարումն << Կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշման, համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել << Արագածոտնի մարզի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի
2. Հաստատել << Արագածոտն մագի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի
3.<< Արագածոտն մարզի Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով դիմել << կառավարության լիազորած պետական կառավարման մարմին
4.Ուժը կորցրած ճանաչել Թալինի քաղաքային համայնքի ավագանու 2012թ-ի հոկտեմբերի 4-ի թիվ 14 որոշումը, Թալինի քաղաքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5.Սույն որոշման 1-ին, 2-րդ, և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Թալինի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -8 Դեմ-0 Ձեռնպահ -0

1. Արամյան Արամ
2. Կարապետյան Արթուր
3. Մկրտչյան Սերգե

4. Դիլանյան Հայկ

5. Մարգարյան Հովհաննես

6. Գրիգորյան Սերյոժա

7. Միքայելյան Ռուստամ

8. Հակոբյան Համլետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված N1

Թալինի քաղաքային համայնքի

Ավագանու 2012թ-ի նոյեմբերի 2-ի

թիվ 19 որոշման

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. Կառուցվածքային ստորաբաժանում
1. Ներքին աուդիտի բաժին

2. Առանձնացված ստորաբաժանում

1. ՔԿԱԳ բաժին

Թալինի քաղաքապետ՝ Ս.Արամյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2
Թալինի քաղաքային համայնքի
Ավագանու 2012թ-ի նոյեմբերի 2-ի
թիվ 19 որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

Աշխատակիցների թվաքանակը 24

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄՈՎ/ |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 150000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 120000 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 110000 |
| | ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ | | |
| 4 | Բաժնի պետ | 1 | 90000 |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |
| 5 | Գլխ.մասնագետ | 1 | 75000 |
| 6 | Գլխ.մասնագետ | 1 | 75000 |
| 7 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 |
| 8 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 |
| 9 | Առաջատար մասնագետ | 1 | 70000 |
| 10 | Առաջին կարգի մասնագետներ | 3 | 50000 |
| 11 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 50000 |
| | ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | |
| 12 | ՔԿԱԳ բաժնի պետ | 1 | 110000 |
| 13 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 50000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 14 | Կադրերի բաժնի տեսուչ, գործավար | 1 | 70000 |
| 15 | Համակարգչային օպերատոր | 1 | 40000 |
| 16 | Պահակ-հնոցապահ | 1 | 60000 |
| 17 | Հավաքարար | 2 | 40000 |
| 18 | Պարետ-տնտեսվար | 1 | 40000 |
| 19 | Վարորդ | 1 | 32500 |
| 20 | Պահակ | 1 | 32500 |

Թալինի քաղաքապետ՝ Ս.Արամյան